



18.04.2014

ՊԱՐԵՍԻՆ 18-Պ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿ, ՊԱՐԵՍԻՆ 18-Պ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿ

<<ՊԱՐԵՍԻՆ 18-Պ>> ՊԱՐԵՍԻՆ 18-Պ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿ, ՊԱՐԵՍԻՆ 18-Պ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿ
Պ

Վերջին տարիների ավանդույթին հավատարիմ՝ այսօր Էրեբունի թանգարանը և <<ԻԿՕՍՕՍ/Հայաստանը>> համատեղ նշեցին Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրը՝ բազմաթիվ հյուրերի և պաշտոնատար անձանց մասնակցությամբ:

Միջոցառումը, որը կրում էր <<Պահպանություն հանուն ապագայի>> խորագիրը ազդարարեց նաև ԵՄ Արևելյան գործընկերության ՄՇԱԿՈՒՅԹ ծրագրով 2012-2014թթ. Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում իրկանացվող <<Տարածաշրջանային համագործակցություն հանուն մշակութային ժառանգության զարգացման>> նախագծի ավարտը Հայաստանում: Նախագիծը, որը Հայաստանում գլխավորապես ուներ կրթական ուղղվածություն, ֆինասավորվել էր ԵՄ կողմից:

Միջոցառումը մեկնարկեց <<Համաշխարհային ժառանգություն. պատմական Լվովի հայկական հիշողությունը>> էլեկտրոնային ցուցադրությամբ՝ ներկայացնելով 1998թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգություն ճանաչված Լվովի պատմական կենտրոնի հայկական հուշարձանները՝ խորհրդանշելով քաղաքացիական, սոցիալական, էթնիկ լարումների ու զինված կոնֆլիկտների թիրախ հանդիսացող մշակութային արժեքների շուրջ ժառանգության պահպանների միջազգային մտահոգությունը:

00000000000000

:
000
000
00000000000000
00000000
000000000000
00
000
00000
00000000000000

:
000000
0000000000000000
0000
0
000000000000

,
000000000000

,
000000
00000000

>>:

Ժառանգության պահապանի օրվա համատեքստում <<ԻԿՕՄՕՍ/Հայաստանը>> ներկայացրեց <<Տարածաշրջանային համագործակցություն հանուն մշակութային ժառանգության զարգացման>> նախագծի շրջանակում ստեղծված <<Պահպանություն հանուն ապագայի>> օժանդակ ձեռնարկը՝ գրված Հայաստանի դպրոցների ուսուցիչների համար: Ներկաներից շատերը այն գնահատեցին որպես արժեքավոր ներդրում՝ Հայաստանի վաղվա քաղաքացու համար ժառանգության արժեքի տեսանկյունից:

Ողջույնի խոսքով հանդես եկան և դպրոցներում մշակութային ժառանգության պահպանության մանկավարժության ներդրումը կարևորեցին միջոցառմանը ներկա ՀՀ մշակույթի փոխնախարար Ա. Սամուելյանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովի գլխ. քարտուղար Վ. Կաժոյանը, Երևանի քաղաքապետի տեղակալ Ա. Սուքիասյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության արտաքին համագործակցության բաժնի պետ Հառ-Բին Աճեմյանը, Հայաստանի ճարտարապետների միության նախագահ Մ. Մինասյանը: Ողջույնի խոսք ասաց և տեղական ժառանգության պահպանության ծրագրերի կոչ արեց նաև միջոցառմանը ներկա ՀՀ նախկին գլխ. դատախազ, <<ՆԻԳ-Ապարան>> Հ/Կ պատվավոր նախագահ, ԻԿՕՄՕՍ/Հայաստանի անդամ Ա. Հովսեփյանը:

<<Տարածաշրջանային համագործակցություն հանուն մշակութային ժառանգության
զարգացման>> նախագիծը Հայաստանում համակարգվել է <<ԻԿՕՄՕՍ/Հայաստան>>
կազմակերպության կողմից՝ Երևանի քաղաքապետարանի <<Էրեբունի>>
արգելոց-թանգարանի մասնակցային գործընկերությամբ, ՀՀ տարածքային կառավարման,
մշակույթի, կրթության և գիտության նախարարությունների աջակցությամբ: Հայաստանում
նախագիծն ունեցել է գլխավորապես կրթական ուղղվածություն: Նախագծի գլխավոր
համակարգումը և գործողությունները Վրաստանում իրականացնում է
<<ԻԿՕՄՕՍ/Վրաստանը>>, իսկ Ուկրաինայում՝ <<Architectura I Prestizh>>
կազմակերպությունը: Նախագծի շնորհանդեսը Հայաստանում տեղի է ունեցել 2012թ. հունիսի
15-ին՝ <<Էրեբունի>> պատմահնագիտական արգելոց-թանգարանում:

000000/00000000

<<00000000 >> 00000000 -00000000

00000000 0000000000000000 0 000000000 00000000 00000000